

# Կ Ո Չ

Ծանօթ է՝ Հոկտեմբերը հայոց մշակոյթի ամիսն է: Արեւմտահայոց վարժարաններէն 50-ին երբեմնի սաները\* կը խնդրեն, որ հայոց բոլոր վարժարաններու եւ առընչեալ մարմիններու պատասխանատուները բարեհաճին կազմակերպել՝ հայոց անցեալի ու ներկայ ժամանակներու մտքի մշակներուն ի պատիւ ժողովրդական պատշաճ հանդիսութիւններ՝ մասնակցութեամբ ուսուցիչներու, աշակերտներու եւ ծնողաց. վայելելով գործօն աջակցութիւնը տնօրէններու եւ հոգաբարձու-խնամակալ խորհուրդներու, հանդերձ հայերէն ու թարգմանաբար այլ լեզուով լրասփիւռներու:

Նաեւ՝ ի մտի ունենալ, որ հայոց մշակոյթի հոգեւոր անկիւնաքար՝ Սուրբ Թարգմանիչներու օրը այս տարի Շաբաթ, 14 Հոկտեմբեր 2017-ին (երբեմն ալ, յաջորդ օրը, ըլլալով Կիրակի) կը տօնեն զայն հայոց 3 յարանուանութեանց եկեղեցիները, ըստ իրենց յատուկ դաւանակարգին:

Սոյն աշխարհիկ եւ կղերական արարողութիւններուն ներկայ ըլլալը անքակտելի մէկ մասն է հայոց մշակոյթն յարգելու:

Ջերմօրէն Ձերդ՝  
Երբեմնի սաներ Արեւմտահայոց  
50 վարժարաններու\*

Հաղորդակցութեան հիւրընկալ հասցէ՝  
proeducatio@aol.com

(\* Ստորեւ Այբ-բենական կարգով՝ 50 վարժարաններու եւ անոնց տեղադրուած 15 վայրերու ցանկերը: Հայոց սոյն վարժարանները դեռ մեծ մասամբ գործօն են, կան նաեւ՝ զանազան պատճառներով փակուածներ:

Ազգային Կեդրոնական, Անարատ Յղութիւն, Ասլանեան, Արամեան-Ունճեան, Բալանճեան Ճեմարան, Գալուստեան, Գէորգոֆ, Դպրոցասէր Տիկնանց, Էսաեան, Թարգմանչաց, Թորոս Պարսամեան, Լեւոն Շանթ, Լեւոն-Վարդուհեան, Խորէնեան, Խրիմեան, Հայ Աւետարականաց (մանկապարտէզներ, նախակրթարաններ, բարձրագոյններ) ընդ որս Շամլըեան-Թաթիկեան, Հինգլեան Նոր-Դպրոց, Մաքրուհեան, Մելգոնեան կրթական հաստատութիւն, Մէրամէթեան, Մխիթարեան Վենետիկեան եւ Վիեննական մանկապարտէզներ, նախակրթարաններ, բարձրագոյններ, ընդ որս՝ Մուրատ Ռափայիլ եւ Սամուէլ Մուրատ, Յովակիմեան-Մանուկեան, Պէգճեան Մայր վարժարան, Սահակեան-Նունեան, Սեդրակեան, Սեմերճեան Ճեմարան, Սիւրբանթօ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Յիսուսեան, Ս. Խաչ Դպրեվանք Լիկէոն, Ս. Հռիփսիմեանց, Վրամեան, Տատեան, Տէմիրճեան, Տիգրանեան. (սոյն վարժարանները մեծ մասամբ գործօն են, կան նաեւ փակուածներ):

Վերոգրեալներուն տեղադրուած 15 վայրերը՝

Այնճար, Ատտիս Ապապա, Բարիզ, Գահիրէ, Լոս Անճելոս, Խարթում, Կ. Պոլիս/Իսթանպուլ, Հալէպ, Մոնղէվիտէօ, Նիկոսիա, Շաւիլ, Պանիէ-գաչան, Պէյրութ, Պուէնոս Աիրէս, Սեւո, Վենետիկ: